

Առցանց վարկ
Տեղեկատվական ամփոփագիր

13.08.2019թ.

Վարկը տրամադրվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Հաճախորդ) սպառողական նպատակներով՝ Բանկի պաշտոնական կայքի օգնությամբ՝ առցանց եղանակով վարկի համար դիմելու և վարկը ստանալու հնարավորությամբ

Վարկը տրամադրվում է առցանց՝ հետևյալ եղանակներից մեկով.

ա) անկանխիկ՝ Հաճախորդի ՀՀ դրամով խնայողական կամ քարտային հաշվին

խնայողական հաշիվների բացման և սպասարկման [պայմանները](#)

Վճարային քարտերի տրամադրման և օգտագործման [կանոնները](#)

Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագները՝ [դեբետային քարտեր](#), [հաշվարկային քարտեր](#)

բ) կանխիկ՝ Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակում և մասնաճյուղերում (այսուհետ՝ Մասնաճյուղ)

Վարկի գումարը համապատասխան վճարային քարտի կամ խնայողական հաշվի միջոցով ստանալու դեպքում գործում են տվյալ վճարային քարտի կամ խնայողական հաշվի սպասարկման պայմանները, սակագները և դրույքները

Հաճախորդին առաջարկվում է վարկի գումարը ստանալ կանխիկ եղանակով, եթե Հաճախորդը Բանկում չունի գործող խնայողական կամ քարտային հաշիվ, կամ առկա հաշվ/ներ/ի/ արժույթը չի համապատասխանում առաջարկվող վարկի արժույթին

Կանխիկ եղանակով ստանալու դեպքում վարկային հայտի հաստատման վերաբերյալ որոշումն ուժի մեջ է 5 օրացուցային օր

Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	Նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ Առավելագույնը՝ 2,000,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	36 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք*	18.5% կամ 19.5%
Վարկի տրամադրման և սպասարկման հետ կապված վճարներ	0 ՀՀ դրամ
Վարկի կանխիկացման վճար	Անկանխիկ եղանակով ստանալու դեպքում՝ համաձայն համապատասխան հաշվի սպասարկման պայմանների և սակագների Կանխիկ եղանակով ստանալու դեպքում՝ 0 ՀՀ դրամ
Տարեկան փաստացի տոկոսադրույք**	20.08 - 21.39%

* Տոկոսադրույքը սահմանվում է՝ կախված Հաճախորդի սքորից, որն իրենից ներկայացնում է թվային մեծություն

** Տոկոսադրույքը չի ներառում համապատասխան վճարային քարտի կամ խնայողական հաշվի սպասարկման հետ կապված սակագներով և դրույքներով նախատեսված ծախսերը

Աքորը ձևավորվում է Բանկի համար հասանելի բազաներ կատարված հարցումների արդյունքում ստացված տեղեկատվության մշակման միջոցով և արտացոլում է Հաճախորդի վարկունակությունը

Սահմանափակումներ

- Հաճախորդը վարկի համար դիմելու օրվան նախորդող 3 տարիների ընթացքում պետք է ունենա առնվազն 2 գործող և/կամ մարված վարկեր՝ յուրաքանչյուրն՝ առնվազն 100,000 ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ չափով, որոնք սպասարկվել են նվազագույնը 3 ամիս և որոնք չեն դասակարգվել «ստանդարտ» դասից ավելի խիստ դատով
- Հաճախորդի անունով գործող վարկերի քանակը չպետք է գերազանցի 10
- Հաճախորդի առավելագույն տարիք վարկի համար դիմելու պահին՝ 62 տարեկան

Մարման հաճախականությունը և եղանակը

Մարումը կատարվում է անուիտետային եղանակով (հավասարաչափ ամսական մարում), որի մեջ փոփոխական մասերով մտնում են մայր գումարը և կուտակված տոկոսները:

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ

Հետևյալ պայմաններով վարկի դեպքում՝

Վարկի գումար	1,000,000 ՀՀ դրամ
Անվանական տոկոսադրույք	18.5%
Մարման ժամկետ	36 ամիս

Մարումների հետ կապված գումարները կկազմեն՝

Ամսական մարում (մայր գումար + տոկոսագումար)	36,403.70
Ընդհանուր տոկոսագումար	310,533.70
Մարումների հանրագումար	1,310,533.70

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ:

Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարծենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ [հասցեում](#):

Տույժեր և տուգանքներ

Պայմանագրով նախատեսված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է տույժ՝ 0.13% չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար

Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տուժանքներ սահմանված չեն

Ուշադրություն

Վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից:

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին: Բացասական վարկային պատմություն ունենալը հետագայում խոչընդոտում է օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անհրաժեշտ փաստաթղթեր

Անկանխիկ եղանակով ստանալու դեպքում	Կիրառելի չէ
Կանխիկ եղանակով ստանալու դեպքում	Վավեր անձը հաստատող փաստաթուղթ, որը լրացվել է առցանց եղանակով՝ վարկային հայտը ներկայացնելիս, և/կամ առկա է Բանկի համար հասանելի տեղեկատվական բազաներում

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Հաճախորդն ունի դրական վարկային պատմություն
- Հաճախորդը դիմելուն նախորդող մեկ տարվա ընթացքում չունի բացասական վարկային պատմություն
- Հաճախորդը ծանրաբեռնված չէ մեծ քանակությամբ և/կամ մեծածավալ վարկային պարտավորություններով
- Հաճախորդը դիմելու պահին չունի ժամկետանց և/կամ դասակարգված վարկ/եր/
- Հաճախորդը գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ
- Հաճախորդի անունով դիմելու պահին առկա չէ ԴԱՀԿ արգելանք կամ այլ իրավասու մարմնի որոշման հիման վրա դրված արգելանք/ներ/

Բանկը հակված է մերժել վարկային հայտը, եթե՝

- Հաճախորդը չունի վարկային պատմություն
- Հաճախորդի վարկունակության գնահատականը (սքորը), ցածր է Բանկի կողմից սահմանված սքորի նվազագույն մեծությունից
- Հաճախորդի վարկային պատմությունը բացասական է. օրինակ՝ հաճախորդի անունով առկա է ժամկետանց վարկ, կամ հաճախորդի անունով առկա է (կամ առկա է եղել) դասակարգված պարտավորություն
- Հաճախորդի անունով դիմելու պահին առկա է ԴԱՀԿ արգելանք կամ այլ իրավասու մարմնի որոշման հիման վրա դրված արգելանք/ներ/
- Հաճախորդի անունով առկա գործող վարկերի քանակը գերազանցում է Բանկի կողմից սահմանված թույլատրելի առավելագույն մեծությունը և/կամ հաճախորդի անունով առկա վարկային պարտավորությունների ընդհանուր մեծությունը գերազանցում է Բանկի կողմից սահմանված թույլատրելի առավելագույն մեծությունը

Վարկառուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը

Վարկի տրամադրման որոշման կայացումը տևում է առավելագույնը 1 բանկային օր
Հաճախորդի իրազեկումը իրականացվում է որոշման կայացումից հետո անմիջապես

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ +374 60 701111

Ֆաքս՝ +374 10 582421

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Viber: +374 95 511211
- Skype: conversebank-callcenter